

ՊԱՇՏՈՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Միկրո բիզնեսի բաժնի ղեկավար
Լրիվ դրույք
ք. Երևան, ՀՀ
Հնարավորինս շուտ
22/03/2023
21/04/2023
Անորոշ` 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Միկրո բիզնեսի բաժնի ղեկավար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բաժնի աշխատանքների կոորդինացում,
- Թիմի հետ միասին նոր միկրո հաճախորդների ներգրավում,
- Ընթացիկ միկրո հաճախորդների սպասարկում,
- Թիմի ամենօրյա աշխատանքների արդյունավետ իրականացման ապահովում,
- Միկրո բիզնեսի գծով պլանների կատարման հսկման պատասխանատվություն,
- Ըստ անհրաժեշտության մասնակցություն թիմի աշխատակիցների կողմից իրականացվող ֆինանսական վերլուծություններին,
- Միկրո հաճախորդների վարկային հայտերի գծով կոմիտեների նախապատրաստում և մասնակցություն,
- Թիմի աշխատակիցների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով աշխատակիցների վերապատրաստում,
- Թիմի աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով հանդես գալ առաջարկներով, նախաձեռնություններով,
- Մասնակցել ստորաբաժանմանը վերաբերող իրավական ակտերի մշակմանը:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն ֆինանսաբանկային ոլորտում,
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ բանկային/հաճախորդների ներգրավման կամ համանման ոլորտում,
- Ղեկավարման ունակություն, գրասենյակից դուրս գտնվող աշխատակիցների կողմից կատարվող աշխատանքների հսկողություն,
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն
- MS Office փաթեթի լավ իմացություն
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու և սեղմ ժամկետները պահպանելու ունակություն, ուղղվածություն դեպի արդյունքը

- Ժամանակի էֆեկտիվ կառավարում
- Հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություն
- Ուշադրություն մանրուքների նկատմամբ
- Համակարգչային գիտելիքներ
- Ընդհանուր զարգացվածություն
- Կազմակերպչական հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Եզրույթապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարզևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրական ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» անվանումով: Այդի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>